

ՇԱՊԻԿ

Ծ Ա Ղ Ր Ա Թ Ե Ր Թ

ԽՐԱԳՐԱՊԵՏՆ Է՛ ԳՐ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԽՐԱԳՐԱԳԻՐՆԵՐ՝ ԵՍ, ԴՈՒՆ, ԱՆ, ՄԵՆԵ, ԴՈՒՔ, ԱՆՈՆԵ,

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿՅԱՆ, Լ. ԼԱՐՆԵՑ,

ԵՐ. ԶԱՎՈՒՇԵԱՆ, ՄԻՀՐԻԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

(Փոփոխելի)

Տ Ա Ս Ն Ա Բ Ա Ն Ե Ա Յ

Ես եմ «Շապիկ» եւ իմե՛զ գառ «Շապիկ» չպիտի ճանչնա՛մ :
 Եմ՝ ահա զարապ սեղ զարապակ բերսն ինչ պիտի առնե՛մ :
 Եմ՝ փառա կաճիկի պիտի դրե՛մ :
 Սակն մարդ պե՛տ է յարգե՛լ եւ գլխուն վրայ ճանցնե՛մ զիս :
 Ո՛չ ոք պե՛տ է աչք ընե՛մ իմ փառայիս, թո՛ղ աչք ունեցողին աճեր
 ելլայ :
 Պե՛տ է իմ փառա ձեր կոկորդը անցրե՛մ :
 Պե՛տ է՝ նեղամա՛մ, երբ ձեր զրկած յոյուածները չսպուխե՛մ :
 Պե՛տ է ձայն անգամ չհանե՛մ եւ գլխուն վրայ դե՛մ, երբ ձեզի
 դե՛մ գուռի այս սրեակներուն մեջ :
 Երբ ցառ բարկանա՛մ, պե՛տ է մեղանչե՛մ :
 Եւ երբ մեղանչե՛մ մօտ ըլլա՛մ, պե՛տ է... քաջախ իմե՛մ :

Թիի 84

Տնօրէն Ռ. Սազանեան

Հոսոցէ՛ Ղալաթիա, Գուրուչու խան թիւ 7

ՇԱՊԻԿ 7 ՓԵՏՐ. 1909 ۞ در اعلامه غلطه قورشولی خاتمه نومرو ۷ ۞

Պ. Պ. ԳՈՂԵՐՈՒ ՍԷՆՏԻՔԱՆ

ԻՐԵՆՑ ՊԼԱՏՅՈՐԱԸ
ԵՒ ԲԱՍՐՈՆ-Ը

Խեղճ խմբագիր...
 Կարծես անոր ճակատագիրը մի՛շտ կողոպտուելը եղած է... մի՛շտ փառաւոր մնալը :
 Գացեր եկեր անցեալ շարժու թուրք խմբագիր մը կողոպտուեցին Պոլսի կողմի Պ. Պ. Գողերը, որոնք գոնէ խնայելու էին խմբագրութեանը :
 Մութ փողոցի մը մէջ լաւ մը կը պարպեն թուրք խմբագրին գըրպանները, որոնք այդ իրիկուն լեցուն են եղեր :
 Խմբագիրը նախ կ'սպառնայ Պ. Պ. Գողերուն և կը յայտարարէ թէ վաղը դէ՛մ պիտի գրէ և ամէնքը մէկ ծակը լեցնել պիտի տայ :
 Գողերը իրենց գործը լմնցնելէ վերջ կ'արտօնեն խմբագիրը որ ուզածին չափ դէ՛մ գրէ և ազատութեան երգ մը երգելով կը մեկնին :
 Խմբագիրը փողոցը կը դառնայ...
 Բայց այդ իրիկուն Պ. Պ. Գողերը, ամէնքն ալ գործի վրայ էին. այս անգամ ուրիշ երկու գող դարձեալ դէ՛մը կ'ելնեն և կը սկսին խուզարկութեան...
 Ի գուր խմբագիրը կը յայտարարէ թէ՛ արդէն ինք իր զինուորական տուրքը վճարած է վերի փողոցը և թէ այլ հետ բան մը չկայ վրան...
 Խմբագրին խօսքին չեն հաւատարու միշտ կը փնտռեն :
 Բան մըն ալ չկար...
 Ծարահատ, Պ. Պ. Գողերը, կարճ խորհրդակցութենէ մը յետոյ կը մերկացնեն խմբագիրը և որպէս զի ցուրտէն չը մտի... աղւոր մը կը ձեռնեն :
 Խմբագիրը հետեւեալ օրը դէ՛մ կը գրէ... ու գողերը կը շարունակեն կողոպտուել... նկատելով որ դէ՛մ գրելով բան մըն ալ չըլար. չէ՛ որ քիթին դէ՛մ ալ կը գրուի հիմա...
 Թուրքիա չի յառաջդիմեր բայց... Պ. Պ. Գողերը Յուլիս 11էն ի

վեր անհուն յառաջդիմութիւն մը ցոյց կուտան և օրէ օր դարգանալու վրայ են :
 Պարոնայք գողերը նկատելով որ աս ասանկ չըլար և իրեւ օրինանաւոր ու յառաջդիմաւոր քաղաքացիներ իրաւունք ունի «սէնտիքա» կազմելու և թարիֆաներ պատրաստելու, որոշեցին միանալ «սէնտիքա» կազմել և գործել միեւնոյն փիւրկային տակ :
 Հետեւաբար որոշեցին նախ մեծ Պաքին մէջ հաւաքուիլ թափափլայի իրենց յատուկ արահին մէջ և կարգ մը նախնական գործողութիւններով ըզբաղիլ... պահպանելու համար նոյն կարգի բոլոր արհեստաւորներուն իրաւունքները և հաւասարութեան սկզբունքը տարածել բոլոր շարքերուն մէջ :
 Նախ սէնտիքային բոլոր անդամները գումարուեցան Իէմէր Ալթը և խմբագրեցին հետեւեալ շրջաբերական կոնդակը :
 «Գողք, Աւազակք և Նանիխի-ճիֆ, ծառայք մեծի Մամոնայի-Գրամի, շնորհիւ Սադայէլի և կամօք գողերու Աղգին՝ մեծայարգ Բերայի և շրջակայ թեմօրէից և բնական անդամք ընդհանուր աշխարհի աւազակաց :
 «Սիրելի՛ք,
 «Այսու կոնդակաւս յայտ առնեմք թէ՛ առանց չեղելու մեր «ծրագրի» հիմնական սկզբունքներէն, պէտք է պահպանե՛ք մեր գոյութեան իրաւունքը և անխնայ պէտք է կողոպտե՛ք այն բոլոր քաղաքացիները, որոնք առևտուր ընելու անունին տակ արդէն մեր արհեստը ի գործ կը դնեն :
 «Արդ՝ այս առթիւ ոչ նուազ կարեւոր կը համարենք ձեր ուշադրութեան յանձնել որ բնաւ վախի տեղ չունիք, քանի որ Ոստիկանութիւնը դէնքերը պիտի հաւաքէ և փոխա-

ներն ու պէճքները աչքերնին եւ ականջնին գող պիտի պատին :
 «Հետեւաբար այս նկատումներով սիրելի՛ք, շանացէ՛ք ձեր շարքերուն մէջ մտցնել վստահութիւն և ի դէպ պարագային... փախուստ : Օձիք ձեռք տալը աղէկ բան չէ՛. թէեւ կրնաք վստահ ըլլալ՝ որ... երկու օր չանցած դուրս պիտի կրնաք ելլել :
 «Կուուեցէ՛ք տղաք, կուուեցէ՛ք և եթէ ինչաք այս սրբազան պատեմազմի միջոցին միշտ համոզուեցէ՛ք որ Ձեր ընտանիքին հարկ եղած հոգածութիւնը չի պիտի զլանանք և մեր բոլոր կողոպտանքներն արդար բաժին պիտի հանենք :
 «Յառաջ տղա՛ք և... մի՛շտ յառաջ ու Մեծն Սադայէլ ձեզի օգնական ըլլայ. Ս.Մէն :»
 ԳՈՂՔ Կ. ՊՈԼՍՈՅ
 Ղալաթիա
 * * *
 Պ. Պ. Գողերը այս շրջաբերականը շրկելէ յետոյ իրենց բանուորական Միութեան անդամներուն, հրատարակեցին իրենց կողոպտատային միջոցային լինկերակցութիւն Պատժօրմը, որ ահաւասիկ :
 Պ Ա Ն Ա Բ Ա Ն Ե Ր
 ՊԼԱՏՅՈՐՍ ԱՆԱԶԻԿԱՅ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԷՏԵՐ
 1. — Թուրքիոյ մայրաքաղաքը, ո՛րքան ատեն որ մութ փողոցներ և ասանկ կանոնաւոր փոխներ ու պէճքներ ունի և քանի Սամի փաշան Նախարար է, ամէն անցորդ պիտի կողոպտուի անխտր... եթէ բե՛մը վեր չունի :
 2. — Նոր ուժիմը պէտք է պահպանուի որովհետեւ մեր գործին ալ կուգայ. հին ուժիմի օրով շահերը նուազ կը ըլլային :
 3. — Գողերու կեդրոնական կառավարութիւնը հիմնուած ժողովրդական գողերու ներկայացուցիչներու իրաւունքներու վրայ կը վարէ մեր Սէնտիքային բոլոր գործերը, արտաքին քաղաքականութիւնը, զօրք մարդել, կեղծ դրամ պատրաստել, մաքսէ ապրանք փախցնել, թրամուէյ կողոպտել և այլն, տեղական միւս ֆօնկսիօնները թողնելով նախկինիստեղծութիւն :
 4. — Ոստիկանական, խտրական կան, փոխական, մէտտէրանական

բոլոր Մարմինները պէտք է մեր կողմը ունենալ՝ ամէն տեսակ գողտնի միջոցներով միջոց սկզբունքը պէտք է գործադրուի բոլոր ազգերու և կրօններու պատկանող գողերու և քաղաքահատներու կողմէ :
 ԻՐԱՒՈՒՆԻՐՆԵՐՈՒ ՀՍԻԱՍՍՐՈՒԹԻՒՆ
 5. — Ամէն Ազգ հաւասար է մեզի համար. ամէն ոք որ դրամ ունի կը կողոպտուի. մեր բոլոր ընկերները այս կէտին ուշադրութիւն ընելով, պէտք խտրութիւն չդնեն... անցորդներու մէջ :
 6. — Այն անցորդը որ կը դիմադրէ... բե՛մը վեր չունի, պէտք է ձգել միայն ուշադրութիւն ընելու է որ ուրիշ անգամ դարձեալ ձեռք ձգուի և հաւասարութեան ոգին պահպանելով... կողոպտուի :
 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ
 7. — Անխտր պահպանուած բանուորներու ազատութիւն կրնան... եթէ աղւոր են. ազատութիւն... փոխիսերեւ և պէճքներու : Ազատութիւն երթեւեկութեան... միայն բազմամարդ տեղերը : Վերացուած փողոցային լապտերներու :
 ԳՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԼԵՁՈՒ
 8. — Մեր ընկերները ազատ են ամէն լեզու սովորելու. կրնան խօսիլ հրեաներէն կամ յունարէն : Սկզբնական լեզուն յունարէն է սակայն և ամէն անգամ քիչ թէ շատ խօսելու է : Պետական լեզուն թրքերէնն է :
 ԴՍԱՐԱՆՆԵՐ
 9. — Դատելի և դատապարտելի են այն ընկերները, որոնք ետալը կը տորներ ձեռքէ կը փախցնեն Խնայիութեամբ : Միտքուիս և զթասիրտ ընկերներ անխնայ տէնօրի կը դատապարտուին :
 ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ
 10. — Մեր շարքերուն մէջ մըտնողը ծառայութեան շրջան չունի : Յման է զինուորագրութիւնը : Հանգրստեան կոչուելու իրաւունք ո՛չ ոքի կը տրուի :
 ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐ
 11. — Ամաական չի տրուի, այլ կողոպտուող հաւասարապէս կը բաժնուի կեղր. Վարչութեան կողմէ, որ տարին անգամ մը կ'ընտրուի ուր ընդհ. ժողովին կողմէ :

ԻՐԱՆԻՆԻՔՆԵՐ

12. — Մեր ընկերութեան անդամները իրաւունք ունին ամէն առեւտուրներու մէջէն բաժին ստանալ, քանակէն բանալ և տուններ կողոպտել. այս իրաւունքները տեղւոյն վրայ յատուկ յանձնաժողովի մը միջոցաւ քննութիւն կատարուելէ վերջ, վարչական մարմինին կողմէ կը հրամայուի:

ԱՆՅԱԳԻՐ

13. — Այն ամէն քաղաքացիները որոնք ստիպուած են գիշերուան ժամը մէկէն վերջ տուն երթալ, իրենց քանակին մէջ պէտք է ունենան առնուազն կէս Օսմ. ոսկի: Անկէ պակաս ունեցողներուն ծեծ մը կը քաշուի և քթին բերնին քանի մը ապտակ կը դարձուի:

14. — Անցորդները պարտաւոր են նախ մեր վարչութեան կեդրոնը հանդիպիլ և ազատ անցագրիներ ստանալ, որոշ գումարներու փոխարէն: Այս գումարները կ'որոշուին ենթակային նիւթական կարողութեան, տունին՝ ո՛ր թաղին և ո՛ր փողոցին մէջ գտնուելէն:

15. — Ամէն քաղաքացիի դրամին փոխարէն ընկալագիր մը և անցագիր մը կը տրուի. որով կրնայ մեր բոլոր շրջանակներուն մէջ անվախ և համարձակ պատիլ, ի հարկին մեր ընկերութեան անդամներուն ցոյց տալով միայն իր անցագիրը:

16. — Հակառակ պարագային վարչութիւնս որեւէ պատասխանատուութիւն չստանձներ, երբ այսինչ փողոցին մէջ կողոպտուելէ յետոյ, այսինչ փողոցին մէջ կ'ապանուի, վրայէն կողոպտուելիք բան մը չգտնուելուն համար:

ՍԱԿԱԳԻՆ

17. — Վարչութիւնս «մայրաքաղաքի» բնակիչներու դիւրութիւն մը ըլլալու համար քաղաքը շրջանակներու բաժնած է: Ա. շրջանակն է Բերա (մէջը ըլլալով Շիշի, Բանկալի, Ֆէրիգիւղ, Ղալաթիա և Գասըմփաշա) Բ. շրջանակ Պոլիս (իւր բոլոր շրջականերով) Գ. Գասը գիւղ (Իւսկիւսար և Հայտար փաշա, մինչև Էսկի Շէհիթ) Դ. Ոսկեղջիւր. Ե. Վասփոր (Ասիական) Զ. Վասփոր (Եւրոպական) Է. Կղզիներ: Հետեւաբար անցորդներու տրուած քեզիքիս մէջ կը նշանակուի թէ ո՛ր շրջանակներու մէջ կրնայ պատիլ այսինչը և ո՛ր փողոցներուն մէջ:

18. — Իսկ Բերայի համար, ուր գործառութիւնները ընդարձակ և աւարտութիւններու աւելի լայն դաշտ մը կայ, կազմուած է բացառիկ սակագրին մը: Արդէն անոնք որ 12էն վերջ տունէն դուրս կ'ելլեն պարտաւոր են նախ գրպանին առնուազն 40 զրշ. ունենալ: Իսկ տունէն դուրս չելլողը 5 զրուշ տուրք պիտի վճարէ: Կալաթա Սէրայէն մինչև Եիշլի ամէն անձ պարտաւոր է վճարել քառասուն զրշ., կողմնակի փողոցները մտնողը տասը զրուշ աւելի կը վճարէ: Ամբողջ Ֆէրիտիէի երկայնքին համար երեսուն զրուշ. Սազըղ Աղածէ մինչև Ենիշէհիլ և

կողմնակի փողոցները վաթսուն զրշ. Այազ փաշայի և Բարմաք Գարուի կողմերը քառասունական, իսկ Բեռա Բէլէսի ետեւի կողմերը մէկ մէկ ոսկի: Ուրիշ տեղերու համար կարելի է սակարկել ընկերութեանս վարչական խորհուրդին հետ:

19. — Ընկերութիւնս պատասխանատու չէ, երբ մեր սեփական չպատկանող արհեստաւորներ անցորդներ կողոպտեն և նոյն իսկ մերկացնեն... Մեր ընկերութիւնը մերկացնելու աստիճան չատրուանար:

20. — Թէ՛ ներկայ պաշտօնը և թէ՛ քարտիճակ երկուքը մէկ գործադրելի է և ուժ ունին միայն մէկ տարի:



Ա՛լ Պոլսոյ մէջ հիւսա ճշմարտապէս անդորրութիւնը կը տիրէ:

Միայն թէ փարսազը մարդուն մարիկը կը լացնեն:

Հիւսի փաշա աղէկ օրերու վարչապետ եղաւ, գոնէ մայրաքաղաքին ապահովութեան տեսակէտով սիրտը հանգիստ կ'ըլլայ...

Այլևս ո՛չ ոստիկաններու եւ ո՛չ ալ պիսիներու պէտք կայ, անոնց գործը գողերու սեփական աւելի աղէկ պիտի ընէ երեւցածին նայելով:

Վարչապետը ջնջելու է այլևս Ոստիկանական նախարարի պաշտօնը եւ Տեֆ ընելու է գոմիսէրներն ու բոլիսները որպէսզի գէթ պիւտճէն թեթեւայ: Եւ հաւանաբար ճամբուած պաշտօնեաները միւս օրը ամէնքը մէկ անդամ պիտի գրուին վերոյիշեալ Սէնտիքային...:

Աչքը սիրեմ ես ասանկ Սահմանադրութեան... որ գողութիւնն իսկ կարգի կանոնի դրաւ և պատուաւոր արհեստներու կարգը անցուց:

Գ. ԹՈՐՈՍԵԱՆ

ՊՅՅՔՅՔ... ԱՍՏՈՒԾՈՅ ԴԵՍ

Հայաստանի այն գաւառներու ժողովուրդը, որոնք սովորաբար ըլլալու երկիւղէն կը տանջուին, որոշքը են Աստուծոյ դէմ պոքոթ ընել: Ո՛չ երկեղեցի պիտի երթան, ո՛չ աղօթք պիտի ընեն, ո՛չ պիտի երկրպագեն, ո՛չ խունկ պիտի ծխեն, ո՛չ մօմ պիտի վառեն և ո՛չ ալ կանթեղներու մէջ իւր պիտի լեցնեն: Ինչո՞ւ ուրովետեւ կ'ըսեն թէ օրուան մէջ 24 անգամ Հայր մեր կ'ըսեն և այնպիսի անգամ իրենց Հաւանապատկան հասցը կ'ուզեն և մէկ օրուան համար թիլիմ մը հաց իսկ չեն գտներ ուտելու:

Թող մեզ գպարտես մեր կ'աղաչեն և ընդհակառակը առնելիքերուն երը, իրենց հացի համար զրկուած նպաստի դրամները անգամ, ի հաշիւ պարտքերուն... կը յափշտակեն: Եկեացե՛ք արհայտքիս ին կ'աղաչեն և տակաւին հին բէթիմի յատուկ կարգ մը բռնակալ լուծի ճընջման տակ կը հեծնեն: Ահա այս երեք նկատուամերով Հայաստանի Հայերը պոքոթ հրատարակեր են Աստուծոյ դէմ: Կը շնորհաւորենք մեր Հայապատանի Հայերը և կը հաւատանք թէ Աստուծոյ տեղի պիտի տայ վերջի վերջոյ, Աւստրիոյ նման, մէկ քանի միլիոն ոսկի փրկագին տալով անոնց:

Ընկեր ՊՅՅՔՅՔ

Մ Ի Ա Յ Ե Ա Լ Ի Պ Ա Լ Օ Ն

Գրեց՝ ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

(Որ յափապէս իզմիռէն եկաւ, այս քոնիկը գրեալ համար)

Մոնթէ Գրիսթօրի պէս մարդ եմ, խա՛չ որ:

Եւ էտմօն Տանթէս պիտի անշըքանար իմ քով:

Իսկ, ութսուն օրուան մէջ աշխարհիս շրջանը ընող ժիւլ Վէրնի Ֆիլիաս Ֆօկ և Պ. Լալաուէտ, որ քառասուն փարսյով աշխարհիս շրջանը ըրաւ՝ որոշեալ օրը իր նպատակին հասնելով, մեծ գործ մը ըրած չեն համարուիր բաղդատմամբ ինծի:

Ես խոստացած էի իմ ընթերցողներուս որ Միացեալի Պալօին պիտի հասնի՛մ անպատճառ:

Եթէ չհասնէի, ո՛չ ոք գլուխս պիտի կտրէր անշուշտ, և եթէ հասնէի ալ, ո՛չ ոք պահաշիջ մը պիտի տար ինծի հարկաւ:

Գոնէ Պ. Լալաուէտ գիտէր որ երբ ժամանակին հասնի, սա՛չափ գումար մը պիտի առնէ և — par dessus le marché — անգլիացի միս մըն ալ առաւ:

Եթէ ես հասնէի, ինծի ո՛չ թէ անգլիացի միս մը, այլ... աւստրիացի քափօն մայ մըն ալ չպիտի տային իբր վարձատրութիւն:

Բայց, իմ parole եղած է միշտ parole d'honneur մը, և երբէք չէ՛ եղած ո՛չ parole skouker կամ parole d'une heure!

Արդ, չորեքշաբթի գիշեր, այն գիշերը որ Միացեալի պալօն կը տըրուէր, ժամը գիշերուան 3 ին, Մեւստըրի Սեկեկաչ շոգենաւը կ'ուզար կենալ Պոլսոյ առջեւ, մէջը ունենալով ձեր խոնարհ ծառան:

Միջոները կ'ըսէին.

— Էֆէնտիմ, չպիտի կրնանք այս գիշեր ճամբորդները դուրս հանել:

Ու իմ սիրտս թը՛փ թը՛փ կը նետէր: Ես ամէն ինչ պիտի ընէի չորեքշաբթի գիշերուան պալօին հասնելու համար և շոգենաւը չորեքշաբթի իրկուսն հասնէ՞ր Պոլիս՝ առանց կարենալու ճամբորդները դուրս հանել...:

Ուրեմն, ես այդ գիշերը շոգենաւին մէջ պիտի անցընէի, մինչ Միացեալի Պալօն կը տրուէր Բերա:

Նաւապետին, Ա. Նաւապետին, Բ. Նաւապետին, Գ. Նաւապետին, շոգենաւի բժիշկին, Նաւաստիններուն, արքեպիսկոսներուն ոտքերը ինկայ:

— Կ'աղաչեմ. ինծի դուրս հանեցէ՛ք, Միացեալի պալօին պիտի երթամ:

— Je m'en fiche bien de votre bal, պատասխանեցին Նաւապետները, Նաւաստինները և արքեպիսկոսները զատ զատ:

Այն ատեն ճարահատ, առաջին Նաւապետին մօտեցայ և ըսի.

— Եթէ զիս այս գիշեր Պոլիս հանէք, ձեզի 100,000 Ֆր. կուտամ:

Նաւապետը աչքերը քթթեց և ըսաւ:

— 200,000 Ֆր. կ'ուզեմ:

— Լա՛ւ, պատասխանեցի և Օսմ. պանդային վրայ չէք մը քաշեցի տնոր:

Եւ այս կերպով կրցայ դուրս ելլել՝ հասնելու համար իմ նպատակիս և յարգելու համար իմ խօսքը:

*** Պալօին դուրս գարգարուած էր դափնի տերեւներով, ինչպէս կ'ընէին հին ատենները թատերախումբերը... արտակարգ ներկայացումներուն:

Իրան առջեւ հաւաքուած էին խումբ մը «մօն-չէռ»ներ, Կարգադիր մասնախումբին անդամներու անդամներուն... անդամները:

Շատ մը ձեռքեր դէպի ինծի երկարեցան:

— Տոմսակ...:

— Ահա՛ ես:

— Ատանկ բան չըլլար, առանց տոմսակի չէք կրնար մտնել:

— Բայց ես դեռ հիմայ ելայ շոգենաւէն և կալիօնոջ-Մաղիկի տոմսակները խմբագրատունը մնացած են:

— Փարս ցնձա՛ւ և տոմսակ տուր:

Նայեցայ որ «ուրիշ ճար չկար և կառք մը ցատկելով՝ գացի գլուխի Պ. Գարեգինը, Կալաթա Սէրայի անկիւնի լրագրավճառ-ծխախոտավճառ-պանքեր-գիշերապահը:

— Միացեալի տոմսակ մը տո՛ւր ինծի, ըսի:

— Ոսկի մըն է:

— Մէճիտ մը ունիմ, առարկեցի:

— Հինգ մէճիտ տո՛ւր:

— Մէճիտ մը ունիմ:

— Հայտէ՛, չորս մէճիտ ըլլայ:

— Մէճիտ մը ունիմ:

— Երեք մէճիտ տո՛ւր ճե տամ:

— Մէճիտ մը...:

— Հայտէ՛ երկու մէճիտ ըլլայ:

— Մէճիտ մը...:

— Ա՛ռ նայիմ, ըսաւ Պ. Գարեգին՝ մէկ ոսկինոց տոմսակը... մէկ մէճիտի տալով ինծի. հրէավայել սակարկութեան մը վերջ:

Այս դէպքը նշանակեցի ցոյց տալու համար խայտառակութիւն մը որ այնչափ ճարակուած է մեր մէջ: Մեր ջոջ աղաները իրենց տոմսակները կուտան իրենց սպասաւորներուն կամ գրագիրներուն և ասոնք ալ կ'երթան ծախել:

Նոյն իսկ կ'ըսուի որ շատեր մէկ ոսկի տալէ վերջ՝ դիտմամբ վերածախել կուտան իրենց տոմսակը, որպէս զի իրենց խաճայովը... խանջողութիւն մը ըրած ըլլան:

— Ահա ձեր ուղած տոմսակը, ըսի՛ Արշակ Պալսթիարի քթին անկելով տոմս:

Երկու քայլ անդին, սեղանի մը վրայ դրած էին պնակ մը ծաղիկ, պնակին ետին կար կապոյտ Օրիորդ մը, խարտեալ մագերով, իսկ անոր քովը ի վեր ուրիշ օրիորդ մը ֆրիդէ:

մազերով ու ճարձուհիի աչքերով և պարոն մը որ պարտիկ... Եանին կը նմանի, թէ և գլուխը թագ է քիչ մը:

— Ծաղկեփունջ մը, ըսաւ Կապոյտ Օրիորդը՝ նազանքոտ ժպիտով ծաղիկի փնջիկ մը դնելով ափս:

— Ո՛ր Կապոյտ Օրիորդ, ըսի, ձեր ծաղիկը կ'ընդունի՞մ, բայց փոխանակ մէջէն մը նետելու ձեր պնակին, ուրիշ ծաղիկ մը կուտամ ձեզի:

— Ո՛ր է, հարցուց Կապոյտ Օրիորդը:

— Անա ես, առէ՛ք զիս, ծաղիկի փոխարէն Ծաղիկ մը ձեզի, բայց մի հոտուրտաք, որովհետեւ ձեր աղւոր քիթը... կ'իյնայ իմ հոտէս:

Մարեցաւ խնդալէն և ես այս առիթէն օգուտ քաղեցի, առանց ձեռքս զրպանս խօթելու ներս սրպրդելու համար:

Դուք ալ ինծի պէս ըրէ՛ք, եթէ իմ... կաշի սուրաթս ունիք:

Սրահէն ներս մտած միջոցիս՝ դիմացս ելաւ թօնպուրիկ տղայ մը, նոյն ինքն ներսէս նորատունկեանը:

— Բաժնեզինէս 5 ղրշ. մնացած էր, առէ՛ք:

Եւ ափս զրաւ քառորդ մը:

— Սիրելի՛ս, տեղը չէր ասոր:

— Ես մտնեմ մը խմեցէք իմ կեանցս:

— Ասիկա ձեր կենացը չըլլա՛ր, այլ ի՛մ կենացը, քանի որ... փարան ես պիտի ցնծամ:

Սրահին մէջ ինչ բազմութիւն, ինչ բազմութիւն...

Օթեակներու մէջ տէգովթէներ, տէգովթէներ...

Մեր բոլոր երեսփոխանները հոն էին, Չօհրապ, Վարդգէս, Հալաճեան:

Չօհրապ երկու ձեռքը զրպանը՝ պալօին բոլոր կոյսերը գլխէ հանելու կ'աշխատէր՝ մէծիտները չիտրտացնելով:

Հալաճեան Պետրոս՝ իր պիզ պէս խերը աւելի սիւրբացած անուշակ նարիններ կ'արձակէր սիրտ որսալու համար:

Իսկ Վարդգէս — էրզրումի երեսփոխանը — Յեղափոխական յաղթանակներ տանելէ վերջ, հիմակ ալ սիրտի conquêteներ կ'ընէր, իր տապալակին մէջ նետելով բոլոր կնիկներու սիրտերը և... թոքերը:

— Ինչ աղւոր ալ աչքեր ունի, կ'ըսէին ամէն կողմէ կիները:

Երկու տեսակ պիւֆէ կար... Նախ սովորական մարդոց պիւֆէն, ուր ամէն մարդ կը ցնծար իր զրպանէն: Երկրորդ՝ արտասովոր մարդոց պիւֆէն, ուր... ա՛ղբ կը ցնծար միշտ:

Իր արտասովոր մարդը՝ հինգ շիշ շաւրանիս խմեցի և... Հայ ազգը ցնծաց իմ գինովութեան փարան:

Միհրդատ Հայկազն իր պօծնութիւն փէշերը հալալացնելով կ'ընէր պարահանդէսին մէջ՝ բոլոր մեծ մարդոց քսուկէն անցնելով:

— Ասդին՝ Հայկազն...

— Անդին՝ Հայկազն...

Ու օրուան մարդը կը պտրտէր, կը թռչէր, կը սաւառնէր՝ մարդոց... սպառնալից վրայ:

— Տիկին, պա՛չ մը, կը մուրար Գրիգոր Չօհրապ գեղանի դիմակաւ և որուհի մը ականջին:

— Չէ՛, չըլլա՛ր, կը պատասխանէր տիկինը:

— Ինչո՞ւ չըլլար:

Այն ատեն տիկինը Կավոնջ ցոյց տալով ըսաւ.

— Ես Կավոնջն ըսածը կ'ընեմ. ինչ կ'ըսես, Կավոնջ, Չօհրապին պաչ մը տա՛մ:

— Եթէ Կավոնջն բոլոր ըսածները պիտի ընես, միջամտեց Չօհրապ, պանդ... բուրդ է:

Կավոնջ. — Տիկին, քանի որ իմ կարծիքիս կը դիմէք Չօհրապին պաչ մը տալու համար, պաչէ՛ք կ'ըսեմ ես անոր բերանը, որովհետեւ Չօհրապը ազգին բերանն է և Չօհրապը պաչելով ազգին բերանը պաչած կ'ըլլաք: Հետեւաբար անպատեհութիւն չկայ:

Չեմ գիտեր այս խօսքս ինչ տխրոտ կուտայ ինծի, բայց կարծեմ... լա՛ւ խօսեցայ:

Յ. Արիտար սրահին մէջ կը պտրտէր... իր նշանածին երազելով:

Վերի ֆուայէին մէջ զանդասայի խուճ մը կար, որ Ս'աղաքո մը կ'երգէր:

— Ինչո՞ւ չի ֆիթէնաղարա մըն ալ չդիք, հարցուցի Արամ Հալաճեանի, որ գլխուն վրայ դրած էր ֆէս մը, որ ճի՛շդ թէփէն կը կենար:

Յանկարծ Օրիորդ մը ձերմակներ հազած ու Գրիգոր Յակոբեանի թեւը մտած, նամակ սկսաւ բաժնել: Մէջքին վրայ կար գրուած. —

Courrier du bal Miatzyal
Օրիորդը ինծի նամակ մը բերաւ և իբր փուրի դրամ պարպեց գըրպանս, ուր կար 15 ղրշ. 15 փարա, ամբողջ հարստութիւնս:

Վարդագոյն նամակը պատեցի և կարդացի հետեւեալ ոտանաւորը. —

ԱՌՆԱՍԻՍՄՆ
ԳՈՒՐԵՆՈՒՆԼՈՒ ԽԱՆԻ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ
4/17 փետ.

Կավոնջ սիրելիս, իզմիրէն ինչ լուր, Հոռոտ աղջկանց ըրի՞ր հոն շատ court? Հալաճեան հոն տեղ քեզ: Չօհրապի, Գիշ մը խոշորկէկ չգտանք քո քիթ...

Դուն նորէն, ինչ պէտք, մեր մէջ եկ'ուր. Հոս կ'ընես ուտել շատ տեսակ սպոր, ինձ համար ես միշտ իմ enfant gâté, Չեմ հաւատար, երբ ինձ կ'ըսես թէ կար ես...

Միացեալիս անգամ մէկ կնիկ abonnée

Օրիորդը զիս 15 ղրուշ 15 փարայով շէնք շնորհք կաթ շինեմ է...

— Բայց կաթ ըլլալը գէշ բան չէ, ըսի, ըսել է թէ ամէն արտու Օրիորդը զիս կը խմէ տաք տաք...

— Կաթ այդ ըսել չէ, պատասխանեցին խնդալով շուրջէս:

— Հապա՛:

— Ուրիշ բան կը նշանակէ:

— Ինչ:

— Բառարան նայէ՛:

— Կ'աղաչեմ ըսի, հոս բառագիրք չունիմ, կաթ ըսելը կը նշանակէ սիւս և կամ առաջին վանկն է կաթողիկոս բառին որոնք կրճատուին ալ կ'ըլլայ երբեմն. եթէ օրիորդը զիս Կաթողիկոս ըսեր է, նորէն շնորհակալ եմ:

— Չէ՛, ծօ, ըսաւ Գրիգոր Յա...

կորեան՝ ականջիս ծռելով, կաթ կը նշանակէ... (Եւ մնացածը ականջիս մէջ աւարեց):

— Մեռօ՛ր, մեռօ՛ր, մեռօ՛ր՝ պոռացի խնդալով, երբ Հայ Օրիորդ մը չի հաւատար, երբ ըսեն իրեն թէ ես կաթ եմ, c'est trop d'honneur pour moi: Բանս բուրդ էր, եթէ... Օրիորդը հաւատար:

Բանի մը հոգիներէ ուղեցի իրենց ուղղուած նամակները, որպէսզի հրատարակեմ, բայց չտուին... Հարկաւ բան մը գիտէին:

Այս միջոցին մեծ քատրիլ սկսած էր... Բեմի վրայ կը պարէին օթեակի տիկիները և պարոնները, իսկ սրահին մէջ... սովորական մահկանացուները:

— Անա՛ դժոխքը և անա՛ արքայութիւնը, ըսի:

Ազնուապետական քատրիլը կը պարէին բեմի վրայ, իսկ տէմոգրադ քատրիլը՝ սրահին մէջ:

— Նա՛ քրնձ-մեզ-աղէկները և նա՛ քրնձ-մեզ-չարերը:

Ամէն մարդ պէտք է իր աղտոտ շորերը իր մէջը լուայ...

Մեծ դադարը կը մտնար և անա՛ սրահ մտաւ պարահանդէսին մեծ ե՛ծ սիւրբիլը:

Ամէն կողմէ. — Օ՛ճճճճճճճճ:

Ծաղկազարդեալ էլ մըն էր որ իր ետեւէն կը քաշէր խոշոր տուփ մը, շրջապատուած գօմիթէի անդամներէն, որոնք մեծ գորտօն կը չինէին իշու՛ն շուրջը, որուն վրայ քեռս նստած էր... Կավոնջ:

Էջը սրահին մէջտեղը հասնելուն՝ խոշոր տուփը բացուեցաւ և մէջէն ելաւ հրեշտակի պէս աղջիկ մը որ սկսաւ նուէրներ բաժնել, մինչ զոյգ մը աղանիներ՝ տուփին մէջ դուրս ելլելով՝ կը թռչէին:

— Սքանչելի գիւտ, խորհեցայ, կեցցեն սա՛ գօմիթէի անդամները, որոնք այսչափ խորհրդաւոր surprise մը գտեր են: Եւ սկսայ մտածել թէ ի՛նչ կը նշանակէր այս թապալուն:

Տուփին մէջէն ելլող աղջիկը Սահմանադրութիւնն էր անշուշտ:

Աղանիները կը նշանակէին Ազատութիւնը, զոր բերաւ մեզի Սահմանադրութիւնը:

Իսկ այն աւանակը որ կը քաշէր Սահմանադրութիւնը և Ազատութիւնը կը բերէր մեզի, կը խորհրդանշէր կարծեմ Միհրդատ Հայկազնը որ... սահմանադրութիւնը և Ազատութիւնը բերաւ մեզի:

Հապա ինչո՞ւ Կավոնջ իշու՛ն վերայ նստած էր քեռս... ատիկա չկըրցայ հասկնալ. պէտք է գօմիթէն հարցնեմ:

...

Պայօին Բրիկները. — Ա. մրցանակ շահեցաւ անձանթ Հայուհի մը, որ հազած էր Երուսաղէմցի Հայուհիի հմայիչ տարազ մը որ անուշը չըսաւ, որպէս զի մարդ իր ձեռքը չ'ընդրէ: Բ. Մրցանակ Տիկին Գոգօի, որ հազած էր Directoireի տարազ մը, սոս ալ... հմայիչ անշուշտ:

Գ. Մրցանակ Օր. Տէ Ծուծէն, ան

որ անցեալ շաբաթ գիշեր նպաստ մը տուաւ Անատուրի Հայ սովետալներուն որ հազած էր մարտքէն գօմիթիւմ, ա՛ս ալ... հմայիչ անշուշտ:

Գալով իմ ճաշակիս՝ ես մրցանակ շահելիք գօմիթիւմ մը միայն տեսայ ամբողջ պալօին մէջ, անալ Օր. Էլիզ Մէհտերեանին գօմիթիւմն էր:

Կէս գիշերէն երեք ժամ վերջը պալօն լմնցաւ, իսկ Մագրիգիւղցիներ, որոնք լուսննելու մտքով եկած էին, մահալէպիճիներու խանութները լուսցուցին:

Հասոյթ 700 ոսկի:

Պրավօ Միացեալի Կարգադիր մասնախումբը, բայց աւելի՛ պրավօ... եթէ 100 ոսկի շրկէ ինծի:

Ազգ. կրթութիւնը 100 ոսկիով ոչինչ կը կորսնցնէ, իսկ ես շատ բան կը շահիմ, նախ... աղւոր աղջկան մը սիրտը:

ԵՐՈՒՍԵՆԻ ԹՕՒԱՅԵԱՆ

ԱՊՏԱԿՆԵՐ

ՉԱՐԿ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԿ՝

★★★ Վա՛յ պապամ վա՛յ, Սուլթանը Հայերը որչա՛փ կը սիրէ եղեր. Հասոյտ մը՝ նորատունկեանի առաջարկեր է եղեր Մեծ-Եպարքոսութիւնը բայց նորատունկեան մերժեց է: Ես ձեզի չէի՛ ըսեր որ «մօտ է գարունը շուտով... կ'անձրեկէ»: Տեսէ՛ք, Սուլթանը Հայերը կը սիրէ եղեր: Մեղք մինչեւ հիմա չէինք գիտեր. հէ՛յ վախ:

★★★ Ազգ. Երեսփոխան, ամէն բանի մէջ քիթը խօթող Մեծտպատիւ Արիստակէս Գասպարեանի մասին ստոյգ աղբիւրէ լոցցինք որ Բերայի Թաղ. Խորհուրդէն տասը ոսկի աւեր է, «մահլիճին» լուր չտալու համար: Պ. Գասպարեան կամ այդ դրամը ետ տալու է և կամ Երեսփոխանութիւնն հրաժարուի է: Հասկըցա՛ր:

★★★ Բերայի Արուեստանոցին մէջ սիրուն հանդէս մը տեղի ունեցաւ Հինգշաբթի, սիրուն տիկիներու, սիրուն օրիորդներու և (նստեցէք) պոռացող պառաններու ներկայութեան: Ամէն բան հրաշալի անցաւ. մեծ բարեանիչ մը Օր. Մէհտերեանին և տասը խաչ Օր. Չ. Փափագեանի, այդ պալիկ օրիորդին: Հրաշալի էր հիւրասիրութիւնը Կոստանի Օր. Ուսուցչուհիներուն, որոնց այս առթիւ Գորչունու լու Պանի Կայսրութիւնը պալատական Արորդագլխութեան մեծ Ժապաւէնը եւ ականակուռ պատուանշանը կուտայ:

★★★ Անգլիա կը քննադատէ Օսմ. Գօմիթէն. արդէն անքննադատելի սեւէ կողմ մը չունի որ այդ Գօմիթէն: Բիւզանդ. Բէչեանն ալ այդ Գօմիթէնն անդամ եղեր է, այն ատեն այլեւս անքննադատելի ըլլալէ կը դադրի քօմիթէն:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ՝ «ԿԱՎՈՇ»

ՈՐՏՈՒՄՏԵՐ Ա. ՍԱԳԱՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ի. Ս. ՍԱՄԱՆՈՍ

« Ծ Ա Ղ Ի Կ » — « Կ Ա Վ Ո Շ Ի » Կ Ա Յ Մ Ա Կ Ե Լ Ե Ը
(Ը Ն Ի Զ Ա Լ Ե Դ Ի Ո Ղ Ի Կ Ի Զ Ա Փ Դ Ի Մ Ա Կ Ե Լ Ե Ը)

Ծաղիկ եւ կապուս միասին, սարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրուց: Ծաղիկ կամ կապուս՝ առանձին՝ արեկան 45 դրուց:

Ծաղիկ եւ կապուս միասին, սարեկան, Գալուսի համար 100, վեցամսեայ՝ 60 դրուց: Ծաղիկ կամ կապուս՝ առանձին՝ սարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրուց:

Ծաղիկ եւ կապուս միասին, Արասսահանի համար սարեկան 52 ճր. վեցամսեայ՝ 13 ճր.: Ծաղիկ կամ կապուս՝ առանձին՝ արեկան 15, վեցամսեայ՝ 8 ճրուց:

Ոչ ոք զօրով բաժանորդ կ'որոնուցազրուի:
Գրամք կանխիկ չըրկողներ եւ մեր փարան ուսողներ կ'անհիծե՞ք եւ... կը խայտառակե՞նք:

20^ր Գ Ա Ր Ո Ւ
Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ե Ը
Ա. Լ. Է. Լ. Ո Ւ Ի Ի Ա.
Տ Ա Ս Ն Ե Ա Կ Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ա Վ Ա Ն
Յ. Գ. Մ Ր Մ Ը Ր Ե Ա Ն Ի
Գ Ի Ն՝ 7 1/2 դրուց

Կեանքի, տիեզերքի, Աստուծոյ վրայ իմաստասիրական շինիչ տեսութիւններ եւ բանաստեղծութիւններ, որուն այս անգամ բարձր վկայականներ տուած են Խրիմեան Հայրիկ, Ս. Պապը, Դուրեան Եղիշէ եպս. Յովհաննէս փաշա Սազըզ եւ նմանիք: Կը ծախուի Գ. Պոլիս Պալինց դրատունն եւ հեղինակին քով:

Կարգալ կ. կեալ



ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ
ՈՐՈՆՔ Կ՛ՈՒՉԵՆ ՊԱՀՊՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻԻՆԸ
ՊԵՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ
ՃՇՄԱՐԻՑ

ՔՐԻՄ ՍԻՄՈՆԸ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻԻՆԸ կատարեալ չըլլար առանց գոյնի մաքրութեան Բոլոր այն տիկիները, որոնք հոգը ունին այս թանկագին ձիւքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն աժանագին արտադրութիւններուն որոնք շնորհալից ու ընթացիկով ծախու կը հանուին: Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներքի կընէ այդքան աժան ծախել զանոնք: Այս պատճառաւ նուազ ըստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օդին մէջ կը չորնան, եւ միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կը ծթոն եւ քիչ ատենէն առաջ կը բերեն անդարձանելի կարմրութիւններ եւ խորշոմներ:

Միայն ՔՐԻՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կրի-սկոթիով բաղադրուած՝ առանց ո՛ր եւ է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլորվայելչասէր կիներէն ընդունուած է եւ նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բաղմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ելլեն ամէն օր: 1900ի տիեզերական Արուեստահանադէսին մէջ արժանացած է Ոսկի Միտալի:

Ի հարկէ ՔՐԻՄ ՍԻՄՈՆԻ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն եւ ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն աղնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կը խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը շահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Բնաւ մի վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ ՔՐԻՄ ՍԻՄՈՆԸ միշտ լաւ ուշադրութիւն ընելով վերի վաճառանշին եւ յաւելտ երիտասարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր զբաղմունքները, պիտի պառանձնան ցաւելով իրենց սխալ խնայասիրութեան համար:

Հ Ա Ճ Ի Ս Ա Ր Ի Մ

ՕՍՄ. ՄԵՐ ԾԱՐԱՐԱՆԱԿԱՆՈՒՄՆԵՐ

Բերա, Մեծ.Փողոց, Թագսիմ

Ո՛վ չի ճանչնար Հաճի Սարիմը, ո՛վ չէ կերած անոր չէօրէքները, ո՛վ չէ ճաշակած անոր շաքարիղէնները, ո՛վ չէ խմած անոր օղին եւ գարեջուրը:

Արդ Հաճի Սարիմ չաքարավաճառատունը որոշած է Բարեկենդանի առթիւ, բարեկենդանիներու սիրոյն, մինչեւ լոյս բաց պահել խանութը:

Ամէն ժարդ, ամէն բարեկենդանի պիտի երթան Հաճի Սարիմին, պալօէն առաջ եւ պալօէն վերջ, եւ հոն պիտի գտնեն լաւ սպասարկութիւն, պաղ կերակուրներ, անուշաղէններ, ըմպելիք, ընտիր մէղէներ եւ ինճէ-սագ:

Ո՛վ բարեկենդանիներ, զացէ՛ք Հաճի Սարիմ. այսպէս կը հրամայէ Կալոօզ իր ընթերցողներուն:

Ծ Ա Ղ Ի Կ — Կ Ա Վ Ո Շ Ի

Վ Ի Զ Ա Լ Ե Դ Ի Ո Ղ Ի Կ Ի Զ Ա Փ Դ Ի Մ Ա Կ Ե Լ Ե Ը

ԿՏՐՕՆ 30 ՓԵՏՐ. 7 1909

ՓԵՏՐ. 15ի (Ը. Ե.) վիճակահանութեան համար մասնակցելու իրաւունք:

Անա՛րասն (20) էփրօիէնի թիւերը

25195	212371
54777	212372
75862	212373
78987	212377
78988	212379
106602	271039
106605	286463
106607	334229
127106	334230
152940	334231



MA YER-ՄԱԵԼԻ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

ՀԱՆԴԵՐՁԵՆՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶՄԵՌՆԱՅԻՆ ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԻՆԵՐՈՒ, ԱՅԵՐՈՒ ԵՒ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԱԺԱՆ՝ ԵՒ ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ

ԳԻՄԵՅԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄԵՔ

La Grande Fabrique



1908Ի ԶՄՐԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ

ՆՈՐՈՑԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ե Ց Է Ք

Շ Թ Ա Յ Ն

ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱԹԻԱ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ

Շ Ի Շ Ե Ր

(Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղօրէից վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պօլոսօֆ (Աշքր էֆէնտի խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճոխ ու այլազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու եւ կարող է մրցիլ ամէն կերպով: Վստահ եւ ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները եւ տօկիաբնիկ պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ հատիկ առեւտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միւստիս ատեն ամառութիւնը ընտրած է իրեն: